ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2022թ. սեպտեմբերի 10-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության և նրա դավանադման մեթոդիկայի>> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Դասախոսների 2022-2023 ուստարվա ծանրաբեռնվածության հարցը:
2. Ամբիոնում դասավանդվող առարկաների 2022-2023 ուս. տարվա առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատում:
3. 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի նախապատրաստական աշխատանքներն էլ. հարթակում:
4. Ընթացիկ հարցեր

1.Լսեցին – 2022-23թթ. ուստարվա Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի ծանրաբեռնվածության մասին հարցը:

Նիստի նախագահ Կ. Գևորգյանը նշեց, որ 2022-23թթ. ուստարվա ուսումնական ծավալներում մենք ունենք ժամաքանակի ավելացում, որը պայմանավորված է դիմորդների քանակի ավելացմամբ:

Արտահայտվեցին – ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Կարեն Գևորգյանը, դոցենտ Վերա Ավետիսյանը:

2. Լսեցին – Ամբիոնում դասավանդվող առարկաների 2022-2023 ուս. տարվա առարկայական փաթեթների և թեմատիկ տրոհումների հաստատման հարցը:

Որոշեցին - Հաստատվել 2022-2023 ուս. տարվա առարկայական փաթեթները և թեմատիկ տրոհումները: Հանձնարարվեց մինչ սույն թվականի սեպտեմբերի 10-ը ավարտել բոլոր առարկաների ԱՈՒՓ:

3.Ընթացիկ հարցեր

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2022թ. հոկտեմբերի 10-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության և նրա դավանադման մեթոդիկայի>> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կարեն Գևորգյանի հաղորդումը Ս. Լիսիցյանի <<Հայ ժողովրդի հինավուրց պարերը և թատերական ներկայացումները>> գրքի հայերեն թարգմանության II հատորի (խմբագրությամբ Կարեն Գևորգյանի) և Ժան Ժորժ Նովեր <<Նամակներ պարի մասին>> (թարգմանությունը ռուսերենից) գրքի հրատարակության երաշխավորելու մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ա. Կարապետյանը (ժողովրդական արտիստ) Գ.Աբրահամյանը, (դոցենտ), Գ. Կարապետյանը (ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ), Ս. Առուստամյանը (վաստակավոր արտիստ), Վ.Ավետիսյանը (մ.գ.թ. դոցենտ) և ուրիշներ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Դիմել ֆակուլտետի խորհրդին հրատարակման երաշխավորելու Ս. Լիսիցյանի <<Հայ ժողովրդի հինավուրց պարերը և թատերական ներկայացումները>> II հատորի և Ժան Ժորժ Նովերի <<Նամակներ պարի մասին>> գրքերը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2022թ. հոկտեմբերի 14-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության և նրա դավանադման մեթոդիկայի>> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

Լ Ս Ե Ց Ի Ն – 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դասալսումների հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Կ.Բ. Գևորգյանը, ամբիոնի որակի պատասխանատու, դասախոս Սուրեն Խաչատրյանը, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Գ.Ա. Կարապետյանը, դոցենտներ Գ.Ս. Աբրահամյանը, Վ.Ի. Ավետիսյանը, ՀՀ վաստակավոր արտիստուհի Ս.Մ. Առուստամյանը, դասախոսներ Է. Մակարյանը, Ա. Թադևոսյանը և ուրիշներ:

Զեկուցող Ս. Խաչատրյանը հայտնեց, որ ամբիոնում ուսումնական տարվա սկզբին մշակվել է դասալսումների ժամանակացույց: Դասալսումներն անցկացվելու են ինչպես սկսնակ, այնպես էլ բավարար աշխատանքային փորձ ունեցող դասախոսների մոտ: Այն նպատակ է հետապնդել և վեր հանել երիտասարդ դասախոսների մոտ նկատված թերությունները՝ նպաստելով դասախոսների մանկավարժական վարպետության աճին:

Ամբիոնի որակի պատասխանատուն տեղեկացրեց, որ դասալսումներ է իրականացրել հետևյալ դասախոսների մոտ.

1. բակալավրիատի 1-ին կուրսում <<Հայկական ժողովրդական պար>> առարկայի դասախոս՝ Գոհար Աբրահամյան
2. բակալավրիատի 2-րդ կուրսում <<Հայկական ժողովրդական պար>> առարկայի դասախոսներ՝ Արտյուշա Կարապետյան, Արթուր Տոնոյան, Լիանա Սարգսյան

3. բակալավրիատի 3-րդ կուրսում <<Հայ պարարվեստի տեսություն և մեթոդիկա>> առարկայի դասախոս Տաթևիկ Նիկոյան

4. մագիստրատուրա 1-ին կուրսում <<Բալետմայստերական իմպրովիզացի>>

առարկայի դասախոս Ցոլակ Գալստյան

Դասալսումներից հետո կատարվելու են դասի արդյունքների քննարկումներ և վերլուծություններ, որին մասնակցելու են նաև ամբիոնների մյուս դասախոսները:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Ընդունել ի գիտություն և ներկայացնել ֆակուլտետի

խորհրդի հաստատման:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՆԱՌԱ ԵՐԻՑՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2022թ. նոյեմբերի 28-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի

<<Պարարվեստի մանկավարժության և նրա դավանադման մեթոդիկայի>>

ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱ
ՐԳ

Կուլտուրայի ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի>> ամբիոնի ԱԲ ուսուցման 2021-2022 տարվա շրջանավարտի՝ որակավորման քննության ավարտական աշխատանքի պաշտպանության՝ արդեն 2022-2023 ուս տարում մասնակցելու թույլտվության համար դիմած ուսանողուհի Սիլվա Արտուշի Հովհաննիսյանի ավարտական աշխատանքը ղեկավարելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման

մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կ. Գևորգյանը, դոցենտ Գ. Աբրահամյանը և դասախոս Սուրեն Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը պատրաստակամ է ղեկավարելու առկա բակալավր ուսուցման համակարգի ուսանողուհի Սիլվա Արտուշի Հովհաննիսյանի ավարտական աշխատանքը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

Արձանագրություն 5

2022թ.-ի դեկտեմբերի 22-ին տեղի ունեցավ տեղի ունեցավ տեղի ունեցավ Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ:

1. 2022-23ուս. տարվա առաջին կիսամյակի ամփոփում, պրակտիկաների արդյունքների քննարկում:
2. Ամբիոնի վարիչի կողմից իրականացրած դասալսումների հարցը:
3. Բակալավրիատի և մագիստրատուրայի քննության հարցաշարերի հաստատում:
4. Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին- ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Կարեն Գևորգյանի գնահատականը առաջին կիսամյակի ուսումնական գործընթացի վերաբերյալ: Նա անդրադարձ կատարեց ամբիոնի կողմից ղեկավարվող պրակտիկաներին, գնահատելով վերջիններիս ընթացքն ու արդյունքը լավ: Կ. Գևորգյանը շնորհակալություն հայտնեց աշխատակազմին ներդրած ջանքների և ուսման մեջ որակի ապահովման համար:

Արտահայտվեցին – ամբիոնի որակի պատասխանատու Սուրեն Խաչատրյանը: Վերջինս նույնպես ներկայացրեց իր գնահատականը ուսումնական քառամսյակում կատարված աշխատանքի վերաբերյալ:

Որոշեցին –2022-23 ուստարվա առաջին քառամսյակի ուսումնական գործընթացը համարել լավ և հաջորդ քառամսյակում ամբիոնի հիմնական գործունեությունը հաստատել:

2.Լսեցին - Ամբիոնի վարիչի կողմից իրականացրած դասալսումների հարցը:

Արտահայտվեցին - Ամբիոնի վարիչի Կ. Գևորգյանը ներկայացրեց կիսամյակի ընթացքում իրականացրած դասալսումները, դիտողություններն ու առաջարկությունները:

Որոշեցին – Հաշվի առնելով Կ. Գևորգյանի դիտարկումները, դրանք կիրառել հաջորդ դասապրոցեսի ընթացքում:

3.Հաստատվեցին առկա և հեռակա բակալավրիատի, մագիստրատուրայի քննության հարցաշարերը:

4.Ընթացիկ հարցեր:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

2023թ. հունվարի 20-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության և նրա դավանադման մեթոդիկայի>> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2022-2023 ուս. տարվա 2-րդ կիսամյակում բակալավրիատում դասավանդվող առարկաների փաթեթների մասին:
2. 2022-2023 ուս.տարվա 2-րդ կիսամյակի ամբիոնի աշխատանքի միջոցառումների պլանի հաստատման մասին:

3. Էլեկտրոնային մատյանների մասին:

ԼՍԵՑԻՆ - 2022-2023 ուս. տարվա 2-րդ կիսամյակում բակալավրիատում դասավանդվող առարկաների փաթեթների մասին:

Կ. Գևորգյան – Ձեր ներկայացրած փաթեթները նախապես ուսումնասիրելուց հետո պարզ դարձավ, որ բոլոր դասախոսական փաթեթները կազմվել են համապատասխան ներկայացված պահանջների, բացառությամբ որոշ կետերի:

ՈՐՈՇԵՑԻՆ – Վերանայել 2022-2023 ուս. տարվա 2-րդ կիսամյակում բակալավրիատում դասավանդվող առարկաների փաթեթները:

ԼՍԵՑԻՆ - 2022-2023 ուս.տարվա 2-րդ կիսամյակի ամբիոնի աշխատանքի միջոցառումների պլանի հաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2022-2023 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ամբիոնի աշխատանքային պլանը:

3.ԼՍԵՑԻՆ - Էլեկտրոնային մատյանների մասին:

Ս. Խաչատրյան – Google classroom հարթակի յուրաքանչյուր դասընթացի էջում ստեղծվել են էլեկտրոնային մատյաններ ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման համակարգի համար: Այս մատյանները նախատեսված են

ուսանողների ներկայայությունը և բացակայությունը նշելու համար, այստեղ գնահատականներ չեն դրվելու:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ի գիտություն ընդունել

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՀԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

2023թ. փետրվարի 18-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության և նրա դավանադման մեթոդիկայի>> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2022-23 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ԱՈՒՓ-ների հաստատում, վերահաստատում:

2. Հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ավարտական աշխատանքների թեմաների վերահաստատում:

3. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանի հաստատում, ամբիոնի աշխատանքային պլանի հաստատում:

4. Ընթացիկ հարցեր:

1.Լսեցին – 2-րդ կիսամյակի ԱՈՒՓ-ների հաստատման և վերահաստատման հարցը:

Որոշեցին - քննարկում, ուղղումներից հետո ԱՈՒՓ-ները google docs / PDf կամ այլ տարբերակով տեղադրել Classroom հարթակում:

2. Լսեցին - Կ. Գևոգյանը հիշեցրեց հեռակա ուսուցման 5-րդ կուրսի ուսանողների ավարտական բեմադրությունների անվանումները:

Որոշեցին – թեմաները հաստատել:

3.Լսեցին – Ամբիոնի և ամբիոնի ՊԴԱ-ի երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանի հարցը: Ամբիոնի վարիչի Կ. Գևորգյանը ներկայացրեց ամբիոնի աշխատանքային պլանը:

Որոշեցին – Ամբիոնի և աշխատակազմի երկրորդ կիսամյակի աշխատանքային պլանները հաստատել:

4.Ընթացիկ հարցեր

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

2023թ. մարտի 15-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության և նրա դավանադման մեթոդիկայի>> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Առկա ուսուցման 4-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների թեմաների վերանայում, վերահաստատում:
2. Մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի թեմաների վերանայում, վերահաստատում:

1.Լսեցին - Նիստի նախագահ՝ Կ. Գևորգյանը ևս մեկ անգամ առաջարկեց վերանայել ավարտական աշխատանքների թեմաները:

Արտահայտվեցին – մ.գ.թ. դոցենտ Վերա Ավետիսյանը, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչներ Յուրա Կոստանյանը, Գագիկ Կարապետյանը:

Որոշվեց - կատարել հետևյալ փոփոխությունները և ուսանողներին թույլատրել նախապաշտպանության: Նշանակեցին նաև նախնական պաշտպանության օր:

3.Ընթացիկ հարցեր

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

2023թ. ապրիլի 20-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության և նրա դավանադման մեթոդիկայի>> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

Արգենտինայում Հայաստանի դեսպան Հովհաննես Վիրաբյանի և Պարարվեստի մանկավարժության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Կարեն Գևորգյանի այցը Արգենտինայի արվեստների պետական համալսարան:

Ընթացիկ հարցեր:

Լսեցին - Հովհաննես Վիրաբյանն ու Կարեն Գևորգյանը հանդիպում ունեցան Ժողովրդական արվեստների ֆակուլտետի դեկան Վիկտոր Ջիուստոյի հետ:

Հանդիպմանը ստորագրվեց Մտադրությունների մասին նամակ՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի և Արգենտինայի Արվեստների պետական համալսարանի Ժողովրդական արվեստների ֆակուլտետների միջև:

Հանդիպմանը հաջորդեց Կարեն Գևորգյանի տեսական և գործնական դասախոսությունը՝ Արվեստների պետական համալսարանի ուսանողների համար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

2023թ. մայիսի 31-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության և նրա դավանադման մեթոդիկայի>> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 4-րդ կուրսի պետական ավարտական քննություն-համերգի ամփոփում
2. Պարի միջազգային օրվա առթիվ պարարվեստի երախտավորների պարգևատրման հարցը:
3. Ընթացիկ հարցեր:

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում կայացավ Պարարվեստի բաժնի 4-րդ կուրսի պետական ավարտական քննություն-համերգը: «Խաթաբալա», «Կտոր մը երկինք», «Առաջին սիրո երգը», «Սողոմոնի երգեր», «Մայրիկ», «Զանգեզուր», «Սայաթ Նովա» և այլ ֆիլմերի համանուն պարային բեմադրություններ՝ նորին մեծություն պարի լեզվով. «Պարում է Հայֆիլմը» խորեոգրաֆիկ ներկայացումը նվիրված էր հայ կինոյի հիմնադրման 100-ամյակին:

Դոցենտ Վերա Ավետիսյանի և դասախոս Տաթևիկ Սիմոնյանի անմնացորդ նվիրումի, հսկայածավալ աշխատանքի և մասնագիտական ղեկավարման արդյունքում՝ ուսանողների կատարմամբ ներկայացվեցին պարային ստեղծագործություններ, ցուցադրելով անհատական և խմբային կատարողականության պրոֆեսիոնալ մակարդակ, որին նրանք հասել են ուսումնառության 4 տարիների ընթացքում:

Նիստի նախագահ Կ. Գևորգյանը հայտնեց, որ հայ կինոյի հիմնադրման 100-ամյակին նվիրված առավել ոգեղեն, մշակութային ու ազգային իրադարձություն դժվար թե լինի:

Ներկաները երախտիքի և գնահատանքի, խոսքերի արժանացրեցին կուրսի ղեկավարներին և ավարտարակ քննության աշխատանքները գնահատեցին գերազանց։

2. Պարի միջազգային օրվա առթիվ պարարվեստի մի խումբ երախտավորներ ոլորտում ունեցած վաստակի համար ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով պարգևատրվել են ԿԳՄՄՆ Ոսկե մեդալով և պատվորգրերով։

Պարգևները հանձնել է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը։

Նախարարի Ոսկե մեդալով են պարգևատրվել նաև Պարարվեստի ամբիոնի դոցենտ Վերա Ավետիսյանն ու դասախոս Արմեն Հովհաննիսյանը, իսկ դասախոս Ֆլորա Քարամյանին հանձնվել է պատվոգիր։

Ամբիոնի վարիչ Կ. Գևորգյանը բոլորին մաղթեց ստեղծագործական նվաճումներ, որոնք կընդլայնեն պարարվեստի սահմաններն ու ավելի ընկալելի կդարձնեն այն։

2. Ընթացիկ հարցեր։

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

2023թ. հունիսի 20-ին տեղի ունեցավ ՀՊՄՀ-ի <<Կուլտուրայի>> ֆակուլտետի <<Պարարվեստի մանկավարժության և նրա դավանադման մեթոդիկայի>> ամբիոնի նիստը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2-րդ կիսամյակի քննաշրջանի ամփոփում:

2. Հայ պարարվեստի պատմության թանգարանի բացման արարողություն:

1. ԼՍԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Կ. Գևորգյանը ներկայացրեց քննաշրջանի գնահատականների ընդհանուր պատկերը և փաստեց, որ 2-րդ կիսամյակի քննաշրջանը անցկացվել է բավականին լավ և արդյունավետ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի դասախոսներ՝ Ա. Դանիելյանը, Ս. Առուստամյանը, Լ. Սարգսյանը, Ա. Տոնոյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ քննաշրջանին ուսանողներին գնահատել են օբյեկտիվորեն և բավականին գոհ էին վերջիններիս պատրաստվածությունից:

1. Նիստի նախագահ Կ. Գևորգյանը ներկայացրեց Հայ պարարվեստի պատմության բացառիկ թանգարանի բացման հանդիսավոր արարողությունը:

Կարմիր

ժապավենը կտրելու պատիվը տրված էր ՀՀ ԿԳՄՍ նախարար, ՀՊՄՀ Հոգաբարձուների խորհրդի նախագահ Ժաննա Անդրեասյանին և ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանին:

Թանգարանի 4 սրահում ցուցադրված են պարարվեստի պատմությանը, պարային ծիս ական արարողություններին վերաբերող իրեր, նյութեր, թանգարանային նմուշներ՝ նա խաքրիստոնեական շրջանից մինչև մեր օրեր:

Նորաբաց թանգարանում ցուցադրության են ներկայացված նաև տարազներ, ուսումնա սիրություններ, ձեռագրեր, հայ պարարվեստի պատմության վերաբերյալ եզակի գրակ անություն, ինչպես նաև թանգարանային բացառիկ նմուշների կրկնօրինակներ, հսկայ ածավալ պատմագիտական, հնագիտական, տարազագիտական և պարագիտական աշ խատանքներ:

Կ. Գևորգյանը շնորհավորեց բոլորին թանգարանի ստեղծման առթիվով:

Թանգարանի հետ կապված աշխատանքները գնահատվեցին գերազանց:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ԵՐԻՑՅԱՆ